ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Ինչպես կրճատել ածխածնային հետքը

Ածխածնային հետքը մարդու գործունեության հետևանքով արտանետված ջերմոցային գազերի համախումբն է: Ջերմոցային գազերն ազդում են կլիմայի վրա:

Ածխաթթու գազը (CO_2) հիմնական ջերմոցային գազն է, որն արտանետվում է մթնոլորտ, երբ էներգիա արտադրելու համար այրվում է հանածո վառելիք՝ նավթ, ածուխ և բնական գազ: Սա նշանակում է, որ նվազեցնելով էներգիայի և ռեսուրսների ամենօրյա ծախսերը, դու կարող ես նվազեցնել CO_2 արտանետումները և օգնել մոլորակին:

Ինչպես կարող եմ դա անել:

ՄԱՍՆԱԿՑԻ՛Ր ՊԱՀՊԱՆԻ՛Ր ԿՐՃԱՏԻ՛Ր

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

- Քայլիր կամ հեծանիվ քշիր
- Օգտվիր հասարակական տրանսպորտից
- Այլ քաղաք մեկնելիս, հնարավորության դեպքում, օգտվիր գնացքից

ԴՊՐՈՑՈՒՄ

- Ջերմամեկուսացրու պատուհանները
- Ցուրտ եղանակին փակ պահիր դռներն ու պատուհանները
- Կանաչապատիր դպրոցի տարածքը, աճեցրու սենյակային բույսեր

ՏԱՆԸ

- Ջերմամեկուսացրու տան պատուհաններն ու դռները
- Անջատիր լույսը, երբ սենյակում չես
- Օգտագործիր էներգախնայող լամպեր
- Հոսանքից անջատիր սարքերը, երբ դրանցից չես օգտվում
- Վարդակից միացրած մի թող բջջային հեռախոսների լիցքավորման սարքերը
- Տաք սնունդը սառնարան մի դիր և դուռն էլ երկար բաց մի թող
- Լվացքը արա ցածր ջերմաստիճանային ռեժիմով և մեքենան բեռնիր ամբողջությամբ
- Մտածիր, ում կարող են պետք գալ այն իրերը, որոնք այլևս քեզ հարկավոր չեն
- Խնայիր ջուրը՝ լոգանքի փոխարեն ցնցուղ ընդունիր, փակիր ջրի ծորակը՝ ատամները մաքրելիս
- Եռացրու միայն այնքան ջուր, որքան օգտագործելու ես
- Սնունդ պատրաստելիս փակիր կաթսայի կափարիչը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

- Ամուր փակիր ջրի ծորակը
- Խնամքով օգտագործիր իրերը և դրանք երկար կծառայեն
- Խնայիր թուղթը
- Տեսակավորիր և վերամշակման հանձնիր թափոնները
- Նախընտրությունը տուր բազմակի օգտագործման սպասքին և ապակյա տարաներին

ԽԱՆՈՒԹՈՒՄ

- Օգտվիր բազմակի օգտագործման պայուսակներից
- Գնիր էներգախնայող սարքեր
- Գնիր տեղական արտադրության ապրանքներ, քանի որ դրանց տեղափոխման համար քիչ էներգիա է ծախսվել
- Գնիր միայն այն՝ ինչ քեզ հարկավոր է, կրճատիր սննդային թափոնները
- Նախքան նոր իրեր գնելը միշտ արժե մտածել՝ արդյոք այն իրոք անհրաժեշտ է:

Կրճատիր ածխածնային հետքը

Տնկիր ծառեր, դրանք կլանում են ածխածինը

Հավաքիր և հանձնիր վերամշակվող թափոնները

ԴՊՐՈՑ

ԽԱՆՈՒԹ

ՊԼԱՍՏԻԿ

ԹՈՒՂԹ

ԿԵՆՍԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐ

Կլիմայական արկղիկ

UNDP